— Երեւի շատ ամուր բերդ է, բարձր աշտարակներ եւ ահագին պարիսպներ ունի:

— Անտարակոյս, մի ժամանակ ունեցել է: Բայց մինչեւ այժմ ինչպէ՞ս կը մնային այդ ամրութիւնները: Գիտէ՞ք, երբ էր Հայկը:

Նա սկսեց ժպտալ իմ միամտութեան վրայ: Ջորեպանի կոպիտ ծառան Հայկի մասին եւս տեղեկութիւն ունէր: Այդ աւելի գրգռեց իմ կասկածը: Ես դարձեալ ընկայ առաջին մտածութիւնների մէջ, որ այդ անձինքը ծանօթ էին ինձ:

Հայոց-ձորը, մեր Հայկ նահապետի բնագաւառը, լի է բազմաթիւ յիշատակներով, որ յիշեցնում են մեր Դիւցազնի պատերազմը Բաբելոնի հսկայի հետ: Ասլանը ինձ բացատրեց, թէ որպէս այժմեան յիշատակարաններով եւ ժողովրդի մէջ պահպանուած առասպելներով ստուգւում է պատմութիւնը:

— Հայրենագիտութիւնը, — ասաց նա, — գլխաւոր ուսմունքներից մէկը պէտք է լինի, որ պարտաւոր է սովորել ամէն մի հայի որդին: Ով որ չէ ճանաչում իր հայրենիքը, չէ կարող ճշմարտապէս սիրել նրան:

Յետոյ նա ցոյց տուեց այն տեղերը, որոնք նոիրական էին դարձել Հայկի եւ Բէլի յիշատակներով: Նա ցոյց տուեց այն բլուրը, որի վրայ տապալուեցաւ մեր հսկայի հզօր բազկից նետահար եղած Բէլը, որ եւ մինչեւ այսօր նրա դրած անունով կոչւում է Գերեզմանք, որովհետեւ այնտեղ ընկան Բէլի քաջերից շատերը, եւ այն բլուրը, որի վրայ պաշտպանուած էին նրանք, եղաւ նրանց գերեզմանը: Նա ցոյց տուեց ճակատամարտի տեղը, ուր առաջին անգամ հանդիպեցան միմեանց երկու հսկաները: Այդ տեղը կոչուեցաւ Հայք, որ այժմ, ժողովրդի լեզուում աղճատուելով, ասւում է Խէք: Նա ինձ ցոյց տուեց, թէ դէպի ո՛ր կողմն է ընկնում Բէլուն, որը Բէլի անունն է կրում: Նա հեռուից ինձ ցոյց տուեց Աստուածաշէնը, մեր Դիւցազնի եւ նահապետի հիմնած առաջին աւանը, որ մինչեւ այսօր մնացել էր շէն, որ մինչեւ այսօր պահպանել էր իր անունը: Աստուածաշէնի բնակիչը միշտ պարծանքով է յիշում, որ դա մեր նախահոր՝ Հայկ դիւցազնի, անունն է կրում, որովհետեւ հսկաների հայրը, որ աստուածների հետ էր պատերազմում, ինքն եւս պաշտւում էր իբրեւ աստուած: Այդ աւանի մօտ էր եւ նրա ամրոցը, ուր մենք գնում էինք:

Վերջապէս մենք հասանք մեր բաղձանքի տեղը:

Աստուածաշէն գիւղի մօտ, արեւելեան կողմում, ընդարձակ դաշտի միջից բարձրանում է մի երկարաձեւ լեռ, որ իր ահաւոր գագաթից իշխում է շրջակայ տափարակների վրայ: Ահա այդ սարի բարձրութեան վրայ մինչեւ այ-